

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

Թեմա՝ Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը հայոց լեզվի եվ գրականության դասերին՝ որպես սովորողների ներգրավվածությունը բարձրացնող միջոց

Կազմեց՝ **Լուսինե Գրիգորյան**

(անուն ազգանուն)

՝Կապանի N 2 ավագ դպրոց՝ ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ **Լուսինե Սողոմոնյան**

՝Կապանի N2 ավագ դպրոց՝ ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Նախաբան -----	2 էջ
2. Գրական ակնարկ -----	3 էջ
3. Գործնական համատեքստ -----	6 էջ
4. Հետազոտության ընթացքը -----	8 էջ
5. <<ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՑ ԳԼԽԱՐԿՆԵՐ>> մեթոդի նկարագրությունը և դիտարկման իմ փորձը -----	11 էջ
6. Արդյունքների մշակում և վերլուծություն -----	14 էջ
7. Ամփոփում -----	17 էջ
8. Գրականության ցանկ -----	18 էջ

Ն Ա Խ Ա Ք Ա Ն

<< Ես լսում եմ և մոռանում: Ես տեսնում եմ և հիշում: Ես անում եմ և հասկանում >>

ԿՈՆՖՈՒՑԻՈՍ

Գիտության և տեխնիկայի զարգացման հետ զուգընթաց փոփոխության են ենթարկվում սովորողների ուսումնական պահանջները: Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատչելի մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, քանի որ աշակերտները, երբեմն համացանցից կամ այլ աղբյուրներից արդեն տեղյակ լինելով դասապրոցեսում ուսումնասիրվող նյութին, սկսում են դասի ժամանակ ձանձրանալ, ակտիվություն և ներգրավվածություն չցուցաբերել, մնալ չեզոք դիրքում: Ահա հենց այստեղ էլ անհրաժեշտ է ուսուցչի՝ ժամանակակից դասին համապատասխան մեթոդներով զինված լինելը, որպեսզի դասը արդյունավետ և նպատակաուղղված միտում ունենա:

Այսօր յուրաքանչյուր ուսուցիչ պետք է պատրաստ լինի ժամանակի մարտահրավերներին, զինված լինի ոչ միայն իր պարապած առարկայի գիտելիքների խոր և բազմակողմանի իմացությամբ, այլև կարողանա այն մատուցել այնպիսի հնարամտությամբ և վարպետությամբ, որ բավարարի սովորողների և՛ հետաքրքրությունները, և՛ իմացության մակարդակը: Գաղտնիք չէ, որ կան ինֆորմացիայի բազմազան և ժամանակակից տեղեկատվական աղբյուրներ, որոնցից շատ հմտորեն և ինքնուրույն օգտվում են սովորողները:

Հետազոտական աշխատանքիս նպատակն է ներկայացնել այնպիսի ռազմավարություններ, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորը ըմբռնելու, ստեղծագործական և քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու, մոտիվացիան խթանելու համար:

Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավվածության բարձրացման համար ուսումնասիրել եմ ժամանակակից ուսուցման մի քանի մեթոդներ և հնարներ, որոնց միջոցով կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել ստեղծագործական և քննադատական մտածողությունը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին կազդի ուսումնական նյութի ամբողջական յուրացման և սեփական եզրահանգումներ կատարելու ունակություններ:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը:

Բ. Ֆ. ՍՔԻՆԵՐ

«Այն պետական կրթության համակարգը իրականացնում է ուսուցման հիմնական սկզբունքները՝ ելնելով սովորողների ինքնուրույնության, համագործակցության, ուսուցման գործնական ուղղվածության, ժամանակակից մեթոդների կիրառման, կրթական համակարգում ձեռք բերված համաշխարհային փորձից: Կրթական հայեցակարգը, կարևորելով հայոց լեզվի և գրականության դերը ազգային մտածելակերպի ամրակայման ոլորտում, ուսուցման նպատակների ոլորտում հատկապես ընդգծում է մայրենի գեղագիտական ընկալման կարևորությունը: Այս դեպքում շատ է կարևորվում ուսուցչի դերը, որը պետք է ուսուցման մեթոդների ճիշտ օգտագործմամբ հայոց լեզվի և գրականության դասերը ծառայեցնի իր նպատակին:

Այսօր ուսուցման մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ ավանդական և ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարվում բացատրական զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի տեղեկատվության՝ գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին, որի ընթացքում վերջինս հանդես է գալիս միայն վերարտադրողի դերում, ինչը քիչ է նպաստում աշակերտի ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացմանը, դասարանի ոչ բոլոր աշակերտներին է ներգրավվում դասընթացին: Ժամանակակից սովորողակենտրոն ուսուցման գործընթացը պահանջում է ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնց կիրառման արդյունքում աշակերտը ուսուցանվող նյութը չի ստանում որպես պատրաստի ամբողջություն, այլ այդ թեմայի կամ խնդրի ամբողջացման գործում ունենում է իր անմիջական ներդրումը՝ որպես հետազոտող, ուսումնասիրող, համադրող և վերլուծող: Այս է պատճառը, որ ժամանակակից ուսուցման գործընթացում կարևորվում է ակտիվ ուսումնառության մեթոդները, որտեղ մեծ տեղ է կազմում աշակերտի ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը, ինչպես նաև խթանում է հիմնովին ներգրավվածությունը դասապրոցեսին:

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության

ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական

ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ՝ կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ,

- Համախմբել դասի ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,
- Կատարելագործել արդեն ձեռք բերած հմտությունները և կարողությունները,
- Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Այսպիսով, երբեմն <<ակտիվ ուսումնառության մեթոդ>> հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն:

Ակտիվ ուսուցման մեթոդները:


Սրանք մեթոդներ են, որոնք նպաստում են աշակերտների *ճանաչողական գործունեությունը*: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: Ակտիվ ուսումնական մեթոդները բնութագրվում է սովորողների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ

գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: Այս մեթոդները ապահովում են աշակերտների ակտիվությունը, մտածական և գործնական գործունեության բազմազանությունը, խթանում նրանց ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացումը: Ուսումնառության ակտիվ մեթոդները հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, սովորողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: Կիրառելով այս մեթոդները՝ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա:

Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Տ Ե Ք Ս Տ


Ակտիվ ուսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:

Պասիվ մեթոդ



Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ **աշակերտները պասիվ լսողներ են: Ուսուցիչ-աշակերտ կապը իրականացվում է** հարցումների, թեստերի, թեմատիկ աշխատանքների միջոցով: Այս մեթոդը քիչ էֆեկտիվ է: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է: Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ-աշակերտ համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և աշակերտը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին:

Ակտիվ մեթոդ




Աշակերտները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ: Ակտիվ մեթոդների նպատակն է ՝ բոլոր պրոցեսների (խոսք, հիշողություն, երևակայություն) օգտագործումն գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Աշակերտը գիտելիք է ստանում տարբեր աբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու ,

ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար աշակերտները պետք է մտածեն, ստեղծագործեն:

Ինտերակտիվ մեթոդ

Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև : Ինտերակտիվ ուսուցումը երկխոսությամբ ուսուցում է,որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ:



Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս ուսուցիչը դադարում է լինել տեղեկատվության հիմական տեղեկատու, միայն կարգավորում կազմակերպում է գործընթացը տալիս խորհրդատվություն:

Եվ այսպես համադրելով ունեցած խնդիրներն ու դրա լուծման համար նախատեսված ռազմավարությունը սկսեցի հետազոտական աշխատանքս՝ հաշվի առնելով մի քանի կարևոր փաստեր՝

- Հետազոտական աշխատանքի թեման պետք է համապատասխանեցնեմ ուսումնական ծրագրին
- Հետազոտությունն անց եմ կացնել 11-րդ դասարանում/ 22 աշակերտ/ հայ գրականություն առարկայից և կատարել եմ որոշ վերլուծություններ՝ ինչպես են նրանք ուսումնառության ակտիվ մեթոդների կիրառման միջոցով ներգրավվում դասընթացին:

Հ ե տ ա զ ո տ ո լ թ յ ա ն ը ն թ ա ց ք ը

Ըստ <<Հայ գրականություն>> առարկայի պետական ծրագրի՝ տարեսկզբի առաջին թեման Նար- Դոսի կյանքի և ստեղծագործությունների ուսումնասիրությունն էր, մասնավորապես <<Սպանված աղավնի >> վիպակը: Համաձայն ուսպլանի՝ թեմային հատկացված է 6 դասաժամ: Նախքան թեմայի ուսումնասիրությունը դասարանում կատարեցի նախնական գիտելիքների ստուգում հայտորոշիչ թեստի միջոցով: Նպատակս էր բացահայտել ՚ինչ գիտեն նրանք Նար- Դոսի մասին , քանի որ թեման նրանք ուսումնասիրել են նախորդ դասարաններում: Հայտորոշիչ թեստի բովանդակությունը հետևյալն էր՝

Հայտորոշիչ թեստ 1

1. Նար- Դոսի անուն-ազգանունն է՝

ա/ Միքայել Հակոբյան

բ/ Միքայել Հովհաննիսյան

գ/ Միքայել Հարությունյան:

2. Նար- Դոսի ո՞ր ժողովածուում է նկարագրված սոցիալական ծանր կյանքով ապրող արհեստավորների կյանքը:

3. Ի՞նչ ենթավերնագիր ունի <<Ես և նա>> պատմվածքը:

4. Ի՞նչ ճակատագիր ունեցավ <<Ես>>-ը:

5. Ո՞ւմ խոսքերն են՝

<<Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք, դուք՝ ներքևը...>>

6. Ո՞ր ստեղծագործության մեջ է պատկերված հայ մտավորականների ծանր ու չարքաշ օրը/

7. Ի՞նչ է մոհիկան:

8. Նար – Դոսի ո՞ր ստեղծագործության հիման վրա է ֆիլմ նկարահանվել:

Դիտարկումներ ժամանակ դասարանում աշխատեցի և՛ ավանդական մեթոդներով, և՛ ակտիվ ուսումնառության մեթոդներով: Նպատակս էր պարզել՝ որ մեթոդներն են առավել արդյունավետ, որ մեթոդների միջոցով են ավելի շատ աշակերտներ ներգրավվում դասին, մեծ ակտիվություն և հետաքրքրություն ցուցաբերում: Հետազոտության ընթացքում դիտարկվեցին սովորողների գործունեությունը թե՛ անհատական աշխատանքների ժամանակ , թե՛ խմբում դերակատարում ունենալու տեսանկյունից, այսինքն, թե ինչքանով են կարողանում նրանք ինքնուրույն աշխատել դասանյութի հետ , ինչպիսի տրամաբանական կապեր են կարողանում ստեղծել ինքնուրույն , դասընկերոջ կամ ուսուցչի օգնությամբ:

Գրողի կենսագրությունն ու ստեղծագործական ընդհանուր բնութագիրը ներկայացրի ավանդական մեթոդներով: Աշակերտները ուշադրությամբ լսում էին, արձագանքում հարցերին, բայց դասարանում ակտիվ մթնոլորտ չէր նկատվում:

<<Սպանված աղավնի>> վիպակի ուսումնասիրությունը իրականացրի ժամանակակից մեթոդներով՝ հիմնականում փորձելով կիրառել <<Մտածողության վեց գլխարկներ>> մեթոդը: Դասի անցկացման քայլաշարը հետևյալն էր՝

Օ Ր Վ Ա Դ Ա Ս Ի Պ Լ Ա Ն

Առարկան՝ Հայ գրականություն

Դասարան՝ 11ա դասարան

Ուսուցիչ՝ Լ. Գրիգորյան

Դասի թեման՝ Նար-Դոս <<Սպանված աղավնի>> վիպակի կերպարները

Դասի նպատակները , խնդիրները

ա) ակադեմիական

- Կարողանալ բնութագրել հերոսներին՝ հաշվի առնելով նրանց բարոյական – հոգեբանական առանձնահատկությունները:

- Մեկնաբանել հերոսների արարքները՝ հայտնելով սեփական կարծիքներ և եզրահանգումներ:

- Արժևորել Նար-Դոսի դերը հայ ռեալիստական արձակի պատմության մեջ:

բ) սոցիալական – Իրար հետ համագործակցելու, մեկը մյուսին լսելու, կարծիքները ընդունելու, խորհրդակցելու կարողությունների և հմտությունների զարգացում:

Անհրաժեշտ պարագաներ – Դասագիրք, <<Սպանված աղավնի>> վիպալը, գրականության տետր:

Ցուցադրական նյութեր - ՏՀՏ- ի միջոցով սահիկաշարի ցուցադրում, <<Սպանված աղավնի>> ֆիլմից հատվածների ցուցադրում

Հիմնական հասկացություններ - վիպակ, սյուժե, կերպար, բարոյական սկզբունքներ, վայելք, վրեժխնդրության կիրք:

Միջառարկայական կապեր -Հասարակագիտություն, խոսքի մշակույթ, արվեստ, հասարակագիտություն, կենսաբանություն, ինֆորմատիկա:

Վերջնարդյունքներ

Աշակերտը՝

- Հասկանա և վեր հանի վիպակի գլխավոր գաղափարը:
- Մեկնաբանի գրական կերպարները, բացատրի դրամց զարգացումը:
- Գտնի վիպակի գլխավոր հարցադրումները:
- Ճանաչի վիպակի արդիականությունը և հիմնավորի ` կյանքից և վիպակից գտնելով համապատասխան օրինակներ:
- Ձեռք բերի և կիրառի գրականագիտական գիտելիքներ:

Դ ա ս ի ը ն թ ա ց ք ը

Խթանման փուլ - Աշակերտներին խթանելու և ներգրավելու համար դասը սկսել << Մտագրոհ >> մեթոդով, որի ընթացքում աշակերտները հակիրճ կներկայացնեն վիպակի դիպաշարի առանցքային կետերը: Ֆիլմից փոքրիկ հատվածի դիտում:

Իմաստի ընկալման փուլ <<Սպանված աղավնի>> վիպակի կերպարները վերլուծել <<Մտածողության վեց գլխարկներ>> մեթոդի միջոցով ` պատահականության սկզբունքով դասարանը բաժանելով վեց խմբի/ մեթոդի նկարագրությունը ստորև/:

Կշռադատման փուլ-Դասը ամփոփել << Քառաբաժան աղյուսակ>> մեթոդով:

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Ի՞նչ հիշեցրեց քեզ վիպակի դեպքերը	Վիպակի արդիականությունը

Տնային հանձնարարություն – Շարադրություն՝ <<Սիրո առեղծվածային խորհուրդը>:

<<ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՑ ԳԼԽԱՐԿՆԵՐ>> մեթոդի նկարագրությունը և դիտարկման իմ փորձը

Այս մեթոդի հիմքում ընկած է զուգահեռ մտածելու հայեցակարգը: Որպես կանոն ` այս կամ այն որոշումներն առաջանում են քննարկման ընթացքում մտքերի բախումներից, սակայն ոչ միշտ է ամենալավ տարբերակն ընտրվում: Այս մեթոդի օգնությամբ տարբեր մոտեցումներ ու գաղափարներ հանդես են գալիս միաժամանակ` առանց իրար հանդեպ ինչ-որ առավելությունների: Նկարագրելով մտածելու վեց ռեժիմներ` Դե Բոնոն համեմատում է դրանք վեց տարբեր գույնի գլխարկների հետ: Քննարկման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ «հագնում է» մի գլխարկ և կատարում իր գործառույթներ:

Իմաստի ընկալման փուլում դասարանը բաժանվեց վեց խմբի, որոնցից յուրաքանչյուրը կրում էր մեկ գույնի գլխարկ: Գլխարկի գույնը որոշում էր տվյալ խմբի անդամների մտածողության ուղղությունը:

«Կրելով» կապույտ գլխարկը` տվյալ խմբի անդամները դառնում են պատասխանատու քննարկման ղեկավարման և դրան կողքից հետևման համար: Այն օգտագործվում է քննարկման սկզբում` հաստատելով վերջինիս նպատակները և որոշելով` ինչի պետք է հասնել արդյունքում: Կապույտ գլխարկների խումբը ներայացրեց Գարեգին Սիսակյանի հանդիպումը Մարգարյանի հետ . վերջինս հայտնում է իր հանկարծակի նշանադրության մասին: Այնուհետև աշակերտները ներկայացրին Սառայի և Մարգարյանի հանդիպումը, Մարգարյանի մտավախությունները Գարեգինի ամուսնության շուրջ, Սառայի տարօրինակ վարքագիծը: Սառան չի սիրում նրան, ավելին ` արհամարհում է, ուստի նրանց ամուսնությունը չի կարող երջանիկ լինել: Այնուամենայնիվ, Գարեգինը ու Սառան ամուսնանում են: Թվում է ` նրանց կյանքը սովորական հունի մեջ է մտնում, բայց հայտնվում է Թուայանը և ամեն ինչ տակնուվրա անում: <<Կապույտ գլխարկ>> խումբը շատ սառը և չեզոք կերպով արձանագրում է փաստերը ` առանձնապես ոչ մի հերոսի վարքագծի մասին որևէ դիրքորոշում ցույց տալով:

Կապույտ գլխարկներից հետո հանդես եկավ <<Սև գլխարկների>> խումբը: «Կրելով» սև գլխարկներ` խմբի անդամները անընդհատ բերում էին փաստարկներ, որոնք կազմում են քննարկվող թեմայի թույլ կողմերը, հնարավոր ռիսկերը, քննադատությունները և այլն: Այս գույնը հիշեցնում է զգուշավորության մասին: Այս խմբի աշակերտները անխնա քննադատում էին և՛ Սառային՝ Թուայանին հավատալու ու տրվելու համար, մանավանդ երեխային սպանելու համար, և՛ Թուայանին ` իր անբարոյական վարքի, անպատասխանատու արարքների համար, և՛ Գարեգինին ` թուլակամության, անվճռականության և կամազրկության համար: Նրանք իրեց ասածները հիմնավորելու համար բնագրից կարդում էին մեջբերումներ և մեկնաբանում:

<<Դեղին գլխարկների>> խումբ խորհրդանշում էր լավատեսությունը: Նրանք հանդես եկան սև խմբից անմիջապես հետո: «Կրելով» դեղին գլխարկը` խմբի անդամները նշեցին

քննարկվող թեմայի բոլոր առավելությունները: Իրականում այս գլխարկը սևի ճիշտ հակառակն է: Տվյալ գույնի կրողը հնարավորինս առանձնացնում ու կարևորում է դրական կողմերը: Խմբի անդամները արդարացրին Սառային՝ նշելով, որ Սառան սիրահարվել էր, իսկ սիրահարված մարդու համար աշխարհի գույները շատ գունեղ են և գեղեցիկ: Արդարացրին նաև Թուայանին՝ նշելով, որ վերջինս էլ սիրել է Սառային, բայց իր անհետևողական բնավորության պատճառով կյանքի հորձանուտներում խճճվել և անտեսել է նրան: Այս խումբը ևս բնագրից կարդում էր մեջբերումները՝ ասածը հիմնավորելու համար:

<<Կարմիր գլխարկներ>> խմբի անդամները, <<կրելով>> կարմիր գլխարկը, արտահայտում են իրենց կարծիքները՝ հիմնված իրենց զգացմունքների և նախազգացումների վրա: Այս խմբի անդամները հիմանականում ուշադրություն էին դարձրել <<Սպանված աղավնի >> պատմվածքի բովանդակությանը՝ Սառայի և Թուայանի հանդիպմանը, նրանց սիրո վայելքներին, որոնց հետևանքները միանգամայն տարբեր հետևանքներ են ունենում երկուսի համար:

<<Սպիտակ գլխակավորները > անաչառ և օբյեկտիվորեն ներկայացնում էին փաստեր՝ գտնելով, որ վիպակի մեջ միայն Թուայանը չէ քննադատության արժանի: Նրանք չարդարացրին Թուայանի անպատասխանատու քայլերը, բայց մեղադրեցին նաև Սառային՝ չմտածված արարքների համար:

<<Կանաչ գլխակավորները>> խորհրդանշում էին ստեղծարարությունը: Նրանք հանդես եկան նորարար ու տարբերվող գաղափարներով՝ վիպակին տալով յուրովի վերջաբան:

Մոթողը շատ հետաքրքիր և բազմաբովանդակ էր: Մոթողի շնորհիվ աշակերտները ոչ թե առանձին- առանձին մեկնաբանում, վերլուծում էին կերպարները, ինչպես սովորաբար լինում է ավանդական դասերի ժամանակ, այլ տարբեր մոտեցումներով քննարկում էին հերոսների արարքները, վերլուծում նրանց գործողությունները, բարոյահոգեբանական դիրքորոշումները, հայտնում իրենց տեսակետները: Իսկ ամենակարևորը, ամբողջ դասը ընթացավ շիկացած, տարբեր հարցերի շուրջ բուռն քննարկումների, բանավեճերի շրջանակում: Դիտարկման ընթացքում եկա այն եզրահանգման, որ ակտիվ ուսումնառության մեթոդեր կիրառելու ժամանակ աշակերտները ավելի ազատ են, անկաշկանդ կարողանում են հայտնել իրենց մտքերը, բանավիճել, կարծիքներ փոխանակել: Այն նաև հնարավորություն է տալիս լսել բոլոր աշակերտներին, ինչը չես կարող անել ավանդական մեթոդներով դաս կազմակերպելիս: Դասի ավարտին աշակերտներին տվեցի լրացնելու գնահատման թերթիկ:

Գնահատման թերթիկ

N/N	Անուն ազգանուն	Ինքնա գնահատում	Փոխադարձ գնահատում	Ուսուցչի գնահատում	Ընդհանուր միավոր
1					
2					
3					
4					

Խմբի գնահատականի միջին

Թեման ավարտելուց հետո դասարանին դարձյալ առաջադրեցի հայտորոշիչ թեստ, որի նպատակն էր պարզել՝ ինչպես ենյ յուրացրել թեման ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառման ժամանակ:


Հայտորոշիչ թեստ 2

1. Ինչպե՞ս է առաջացել Նար- Դոս գրական կեղծանունը:
2. Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչ է Նար- Դոսը:
3. Գրական ո՞ր ժանրին է պատկանում <<Սպանված աղավնին>>:
4. Ո՞վ է ո՞ւմ ասում. <<Դուք չեք կարող մարդ ու կին լինել>>:
5. Լրացնել բաց թողված բառերը .<<Ցինիկի պես____ էր, լրբի պես ____, երեխայի պես ____>>:
6. Ինչպե՞ս էին ծանոթացել Սառան և Թուսյանը:
7. Ինչպե՞ս վարվեց Սառան առաջնեկի հետ:
8. Ու՞մ խոսքերն են. <<Քերականության միջից պետք է ջնջել ապառնի ժամանակը>>:
9. Ո՞ր հերոսն էր ճանաչում բոլոր հերոսներին <<Սպանված աղավնի>> ստեղծագործության մեջ:
10. Ինչպե՞ս է ներկայացված սպանված աղավնու պատմությունը:

Տվյալների մշակում և վերլուծություն


Դիտարկումների ընթացքում կատարել են մի շարք վիճակագրական վերլուծություններ ,որը կներկայացնեն դիագրամների միջոցով:

1. Գիտելիքների ստուգման նախնական հայտորոշիչ թեստ-8 հարցին ճիշտ են պատասխանել	3 աշակերտ	14%
8 հարցից 7 հարց ճիշտ են պատասխանել	8 աշակերտ	36%
8 հարցից 6 հարց ճիշտ են պատասխանել	3 աշակերտ	14%
8 հարցից 5 հարց ճիշտ են պատասխանել	2 աշակերտ	9%
4 և 4-ից ցածր են պատասխանել	6 աշակերտ	27%




2. <<Մտածողության վեց գլխարկներ>> մեթոդի կիրառման ժամանակ խմբային աշխատանքի մասնակցած աշակերտների արդյունքները՝ ըստ գնահատման թերթիկի

9 մվ	7 աշակերտ	32%
8մվ	8 աշակերտ	36%
7մվ	4 աշակերտ	18%
6մվ	3 աշակերտ	14%




3. Աշակերտների ներգրավվածության սանդղակը ակտիվ ուսումնառության մեթոդով պարապելուց հետո:



4. Հայտորոշիչ թեստի արդյունքները թեման ուսումնասիրելուց հետո


10-10	7 աշակերտ	31%
10-9	5 աշակերտ	22%
10-8	7 աշակերտ	31%
10-7	3 աշակերտ	13%



5. Ավանդական և ակտիվ ուսումնառության մեթոդներ համամատական բնութագիրը՝


ա Ավանդական մեթոդներով դաս

Բարձր ակտիվություն են ցուցաբերել	4 աշակերտ	18%
Միջին ակտիվության	7 աշակերտ	31%
Ցածր ակտիվության	11 աշակերտ	50%



բ Ակտիվ ուսումնասիրության մեթոդով դաս

բարձր ակտիվության	10 աշակերտ	46%
Միջին ակտիվության	8 աշակերտ	36%
Ցածր ակտիվության	4 աշակերտ	18%



Ա մ փ ո փ ո լ մ

Նման մեթոդների կիրառումը մեծացնում է նյութի ավելի լավ ընկալման հավանականությունը, խմբային աշխատանքի դեպքում դասընկերոջ կողմից մի անգամ ևս բացատրվում է ուսումնասիրվող նյութը՝ դրանով իսկ նպաստելով ավելի լավ յուրացմանը: Մեծանում է նաև նրանց՝ իրենց կարողությունների նկատմամբ հավատը, հետևաբար և ինքնավստահությունը, ձևավորվում են դրական փոխհարաբերություններ դասընկերների միջև, համագործակցության տարրեր: Շատ կարևոր է խմբի ճիշտ ձևավորումը, յուրաքանչյուրը խմբում ստանձնում է որևէ դերակատարում:

Այս մեթոդները թույլ են տալիս՝

- ակտիվացնել և խթանել սովորողների ուսումնասիմացական գործընթացը :
- ձևավորել հաղորդակցական և անհատական կարողունակություններ խմբային աշխատանքի կազմակերպմամբ
- ապահովել սովորողների առարկայական և վերառարկայական կարողունակությունները և հմտությունները

Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը հանգեցնում է հետևյալ արդյունքներին՝

ա/Սովորողների իմացական գործունեության բարձրացում,

բ/ ինքնուրույն սովորելու կարողության զարգացում,

գ/ թիմային աշխատանքի հմտությունների զարգացում,

դ/ սովորողի ինքնագնահատականի ճշգրտումներ,

ե/ հաղորդակցման հմտությունների ձևավորում և զարգացում (հաղորդակցման հմտություններ ինչպես հասակակիցների, այնպես էլ ուսուցիչների հետ):

-տեսական նյութի մեծ ծավալի արդյունավետ ներկայացում,

-ակտիվ լսելու հմտությունների զարգացում,

-ուսումնասիրված նյութի մշակում,

-որոշումներ կայացնելու հմտությունների զարգացում,

-թեմայի վերաբերյալ գիտելիքների, հմտությունների և կարողությունների արդյունավետ ստուգում:

Գրականության ցանկ

1. Ա. Մ. Արզումանյան - << Հայ գրականության դասավանդման մեթոդներ >>- Երևան -2020
2. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:
3. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. Մանկավարժություն/ Մանկավարժ- 2005
4.
https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%BF%D5%A1%D5%AE%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82_6_%D5%A3%D5%AC%D5%AD%D5%A1%D6%80%D5%AF%D5%B6%D5%A5%D6%8
5.
https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80
6. Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան – Հայ Գրականություն -11 դասարան-ԵՐԵՎԱՆ , <<Արեվիկ>> -2015

Հավելված

Օրվա պլան 2

Դասարան՝ 12դ

Առարկան՝ Հայոց լեզու

Ուսուցիչ՝ Լուսինե Գրիգորյան

Դասի թեման՝ Բառակազմություն

Դասի նպատակը

-Վերհիշել եվ ներկայացնել բառերի տեսակները ըստ կազմության:

-Կարողանալ խոսքի մեջ տարբերակել պարզ, բարդ, ածանցավոր եվ բարդ ածանցավոր բառեր:

-Կարողանալ կատարել բառակազմական վերլուծություններ:

Միջառարկայական կապ- Հայ գրականություն, երաժշտություն, ինֆորմատիկա:

Անհրաժեշտ պարագաներ

Դասագիրք, տետր, ՏՀՏ միջոցներ, էլեկտրոնային գրատախտակ:

Դասի ընթացք

Կազմակերպական հարցեր – հաճախումների հաշվառում:

Խթանման փուլ - <<Հայտորոշիչ թեստի>> միջոցով ամփոփել նախորդ թեմաները՝ <<Բառերի տեսակները ըստ ձևի եվ իմաստի>> փոխհարաբերություն:

Իմաստի ընկալման փուլ – Դասը ամբողջովին ներկայացնել աշակերտների միջոցով:

I խումբ – Պարզ բառեր

II խումբ-Ածանցավոր բառեր

III խումբ- Բարդ բառեր (հոդակապ եվ անհոդակապ բարդություններ)

IV խումբ- Բարդ բառեր (կրկնավոր եվ հարադրավոր բարդություններ) բարդ ածանցավոր բառեր:

Խմբերին տալ 3-5 րոպե պատրաստվելու համար:

Խմբերը ներկայացնում են աշխատանքը, որից հետո կատարվում են գործնական վարժություններ.

ա) Տեղադրել բանաստեղծության մեջ բաց թողված բառերը՝որոշելով կազմությունը . գուշակելով՝ է հեղինակը եվ բանաստեղծության վերնագիրը:

բ) Տրված բառերը ենթարկել բառակազմական վերլուծության

գ) Վարժություններ դասագրքից:

Գրատախտակին կազմել <<Բառերի կազմություն>> գծապատկերը:

<<Learningapps>> գործիքի միջոցով խմբավորել բառերը:

Կշռադատման փուլ- Դասը ամփոփել <<Learningapps>> գործիքի <<Խաչբառ>> տարբերակով, որից հետո կարդալ եվ քննարկել <<Պնդումների փունջ>> բաժնից համապատասխան վարժություններ:

Գնահատման (ծեվավորող եվ միավորող)

Տ.Ա վարժություններ 64,65 էջ 88-89

Վերջնարդյունքներ

-Տարբերի բառակազմության եղանակները:

-Տեքստում գտնի տարբեր կազմություններ ունեցող բառեր,մատնանշի բառակազմական տեսակը:

-Տարբերակի բարդ բառերը ածանցավորից:

-Կազմի բառային հոմանիշներ: